

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՂԵՖԻՑԻՏԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՈՒ

Անկախության հռչակումից առ այսօր ՀՀ պետական բյուջեն ձևավորվել է եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, այսինքն՝ դեֆիցիտով: Եկամուտների և ծախսերի մեծությունների փոփոխության հետ կապված անընդհատ փոփոխվել է պետական բյուջեի դեֆիցիտի տեսակարար կշիռը (տե՛ս աղյուսակ 1):


Թիվ 1 աղյուսակի տվյալներից պարզ է դառնում, որ դեֆիցիտի մասնաբաժնը պետական բյուջեի ծախսերում դրսևորում է նվազման միտում: Այսպես, օրինակ, եթե 1997-2001 թթ. այն գերազանցել է 20 տոկոսը, ապա 2002 թ.-ից սկսած այն նվազել է և կազմել. 2003 թ.՝ 14,1 %, 2004 թ.՝ 13,5 %, 2005 թ.՝ 12,5 %, իսկ 2006 թ.՝ 14,5 %: Դա, անշուշտ, դրական միտում է և պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերական նվազման ուղղված միջոցառումների արդյունք է:

Դեֆիցիտի և բյուջեի ծախսերի տոկոսային հարաբերակցության ցուցանիշի դինամիկան առավել պատկերավոր ներկայացված է թիվ 1 գծապատկերում:

Աղյուսակ 1

Բյուջեի ծախսում դեֆիցիտի տեսակարար կշիռը 1997-2006 թթ.¹

Տարի	Գումարը, մլն. դրամ			Փոփոխությունները նախորդ տարվա նկատմամբ, %			Դեֆիցիտի տեսակարար կշիռը ծախսերի նկատմամբ, %
	եկամուտ	ծախս	դեֆիցիտ	եկամուտ	ծախս	դեֆիցիտ	
1997	117937,7	151912,7	33975,0	-	-	-	22,4
1998	160783,8	211702,5	50918,7	36,3	39,4	49,9	24,1
1999	191692,1	248310,1	56618,0	19,2	17,3	11,2	22,8
2000	202097,5	252780,4	50682,9	5,4	1,8	-10,5	20,1
2001	193399,5	247231,7	53832,2	-4,3	-2,2	6,2	21,8
2002	219158,8	260147,7	40988,9	13,3	5,2	-23,9	15,8
2003	286979,8	334238,6	47258,8	30,9	28,5	15,3	14,1
2004	274122,5	317039,1	42916,6	-4,5	-5,1	-9,2	13,5
2005	345346,2	394600,1	49253,9	26,0	24,5	14,8	12,5
2006	412356,2	482193,9	69837,7	19,4	22,2	41,8	14,5



Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի տեսակարար կշիռը բյուջեի ծախսերում 1997-2006 թթ.

Պետական բյուջեի դեֆիցիտի կարգավորման առումով կարևոր է մասնավորապես դեֆիցիտի և համախառն ներքին արդյունքի տոկոսային հարաբերակցության ցուցանիշի վերլուծությունը: Ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տալիս, որ այն ևս դրսևորում է նվազման միտում: Բավական է նշել, որ, եթե այդ ցուցանիշը 1997թ. կազմել է 4,2, 1998 թ.՝ 5,3, 1999 թ.՝ 5,7 տոկոս, ապա 2004թ. այն կազմել է 2,2, 2005 թ.՝ 2,2, իսկ 2006 թ.՝ 2,6 տոկոս (տե՛ս աղյուսակ 2):

¹ ՀՀ պաշտոնական տեղեկագրեր N 5, 21.03.1997, էջ 3, N 32, 31.12.1997, էջ 1, N 32 (65), 30.12.1998, էջ 2, N 5 (103), 24.03.2000, էջ 2, N 34 (132), 31.12.2000, էջ 2, N 3 (178), 11.01.2002, էջ 2, N 3 (238), 14.01.2003, էջ 2, N 4 (303), 19.01.2004, էջ 2, N 3 (375), 17.01.2005, էջ 3, N 77 (449), 12.12.2005, էջ 3:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, դեֆիցիտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1997-1999 թթ. աճել է 1,5 տոկոսով, իսկ սկսած 2000 թ.-ից նկատվում է աստիճանաբար նվազում: Ըստ երևույթին, մեծ տատանումների իրական աղբյուրը գտնելու համար պետք է համեմատել եկամուտների և ծախսերի ցուցանիշների փոխհարաբերությունները:

Դեֆիցիտի և համախառն ներքին արդյունքի տոկոսային հարաբերակցության ցուցանիշի դինամիկան պատկերավոր ձևով ներկայացված է գծապատկերի տեսքով (տե՛ս գծապատկեր 2):


Միջազգային փորձը վկայում է, որ դեֆիցիտի և համախառն ներքին արդյունքի տոկոսային հարաբերակցության օպտիմալ ցուցանիշը կազմում է 3% (Եվրամիության կողմից ընդունված չափանիշ)¹, որի դեպքում պարտքը պետության համար չի վերածվի ծանր բեռի:

Բյուջեի դեֆիցիտը 1997-2006 թթ. յուրաքանչյուր նախորդ տարվա համեմատությամբ ունեցել է աճման տեմդեմ: Բացառություն կազմում են 2000, 2002, 2004 թթ.: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի դեֆիցիտի նվազեցումները համապատասխանաբար 10,5, 23,9 և 9,2 տոկոսային կետով պայմանավորված են բյուջեի ծախսերի աճի նկատմամբ եկամուտների տոկոսային և գումարային առաջանցիկ աճով: 2000 և 2002 թ. դրանք համապատասխանաբար կազմել են՝ 3,6 և 8,1 տոկոսային կետ կամ 5935,1, 12843,3 մլն. դրամ: Ինչ վերաբերում է 2004 թ., ապա այստեղ 9,2 տոկոսային կետով նվազեցումը պայմանավորված է և՛ ծախսերի (17199,5 մլն. դրամ, 5,1%), և՛ եկամուտների (12857,3 մլն. դրամ, 4,5%) գումարային նվազումով:

Աղյուսակ 2

Բյուջեի դեֆիցիտի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում 1997-2006 թթ.²

Տարի	ՀՆԱ		Բյուջեի դեֆիցիտ		Դեֆիցիտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %
	մլն. դրամ	% նախորդ տարվա նկատմամբ	մլն. դրամ	% նախորդ տարվա նկատմամբ	
1997	804335,6	-	33975,0	-	4,2
1998	955384,8	118,8	50918,7	149,9	5,3
1999	987443,7	103,4	56618,0	111,2	5,7
2000	1031338,3	104,4	50682,9	89,5	4,9
2001	1175876,8	114,0	53832,2	106,2	4,6
2002	1362471,7	115,9	40988,9	76,1	3,0
2003	1624642,7	119,2	47258,8	115,3	2,9
2004	1907945,4	117,4	42916,6	90,8	2,2
2005	2242880,9	117,6	49253,9	114,8	2,2
2006	2657130,7	118,5	69837,7	141,8	2,6



Գծապատկեր 2. Դեֆիցիտի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում 1997-2006 թթ.

Միջազգային փորձը վկայում է, որ դեֆիցիտի և համախառն ներքին արդյունքի տոկոսային հարաբերակցության օպտիմալ ցուցանիշը կազմում է 3% (Եվրամիության կողմից ընդունված չափանիշ)³, որի դեպքում պարտքը պետության համար չի վերածվի ծանր բեռի:

¹ Государственные и муниципальные финансы: учебник / под ред. проф. С.И. Лушина, проф. В.А. Слепова. – М.: Экономистъ, 2006, с. 213.

² Հաշվարկները կատարված են ՀՀ պաշտոնական տեղեկագրերի և ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա: ՀՀ պաշտոնական տեղեկագրեր N 5, 21.03.1997, էջ 3, N 32, 31.12.1997, էջ 1, N 32 (65), 30.12.1998, էջ 2, N 5 (103), 24.03.2000, էջ 2, N 34 (132), 31.12.2000, էջ 2, N 3 (178), 11.01.2002, էջ 2, N 3 (238), 14.01.2003, էջ 2, N 4 (303), 19.01.2004, էջ 2, N 3 (375), 17.01.2005, էջ 3, N 77 (449), 12.12.2005, էջ 3, «Հայաստանի ազգային հաշիվները. աղյուսակներ, մեթոդաբանություն, վերլուծություն (1990-1997 թթ.)», ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, էջ 139, «Հայաստանի ազգային հաշիվներ. տարեկան և եռամսյակային տվյալներ» վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004, էջ 30-31, «Հայաստանի ազգային հաշիվներ. տարեկան և եռամսյակային տվյալներ» վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2006, էջ 30-31:

³ Государственные и муниципальные финансы: учебник / под ред. проф. С.И. Лушина, проф. В.А. Слепова. – М.: Экономистъ, 2006, с. 213.

Բյուջեի ղեկիցիտը 1997-2006 թթ. յուրաքանչյուր նախորդ տարվա համեմատությամբ ունեցել է աճման տեմդեդ: Բացառություն կազմում են 2000, 2002, 2004 թթ.: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի ղեկիցիտի նվազեցումները համապատասխանաբար 10,5, 23,9 և 9,2 տոկոսային կետով պայմանավորված են բյուջեի ծախսերի աճի նկատմամբ եկամուտների տոկոսային և գումարային առաջանցիկ աճով: 2000 և 2002թ. դրամը համապատասխանաբար կազմել են՝ 3,6 և 8,1 տոկոսային կետ կամ 5935,1, 12843,3 մլն. դրամ: Ինչ վերաբերում է 2004 թ., ապա այստեղ 9,2 տոկոսային կետով նվազեցումը պայմանավորված է և՛ ծախսերի (17199,5 մլն. դրամ, 5,1%), և՛ եկամուտների (12857,3 մլն. դրամ, 4,5%) գումարային նվազումով:

Մնացած տարիներին պետական բյուջեի ղեկիցիտը գրեթե անընդհատ աճել է: Դա պայմանավորված է նրանով, որ ծախսերի աճի նկատմամբ եկամուտների տոկոսային առաջանցիկ աճ ստանալու համար եկամուտների և ծախսերի աճի տարբերությունը կազմել է բացասական մեծություն: Այսպես, 1999, 2001, 2003, 2005 թթ. բյուջեի ղեկիցիտն աճել է համապատասխանաբար՝ 11,2, 6,2, 15,3, 14,8 տոկոսով կամ 5699, 3149, 6270 և 6337 մլն. դրամով:

Շուկայական տնտեսության անցման փուլում գտնվող երկրներում պետական ծախսերի նվազ մեծացման պայմաններում հարաբերականորեն կրճատվում են բյուջեի մուտքերը: Դա հանգեցնում է նոր ու ավելի ծավալուն բյուջետային ղեկիցիտի, և այդպես շարունակ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբ 2000թ. նախորդ տարվա նկատմամբ բյուջեի ղեկիցիտը նվազեցվեց 5935 մլն. դրամով և սահմանվեց 50 մլրդ. 683 մլն. դրամ, իսկ պետական բյուջեի ծախսերի հավելաճը սահմանվեց ընդամենը 4470 մլն. դրամ՝ նախորդ տարվա 36608 մլն. դրամի դիմաց: Այդ մոտեցումների բացասական հետևանքներն իրենց երկար սպասել չտվեցին: Այսպես, դրամը պատճառ հանդիսացան այն բանին, որ 2001թ. պետական բյուջեն կազմեց առավել մեծ ղեկիցիտով և սահմանվեց՝ 53832,2 մլն. դրամ, որը 3149,3 մլն. դրամով գերազանցում էր նախորդ տարվա ղեկիցիտի չափը:

Աղյուսակ 2-ի տվյալներից պարզ է դառնում, որ ամբողջ ժամանակաընթացքում տեղի են ունեցել համախառն ներքին արդյունքի կայուն աճ: Ընդ որում, եթե 1997-2001 թթ. աճը կազմել է գրեթե 1,5 անգամ, ապա 2002-2006 թթ. այն աճել է 2,26 անգամ:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև բյուջեի ղեկիցիտի հավելաճի աղբյուրների վերլուծությունը (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Բյուջեի ղեկիցիտի հավելաճի աղբյուրները 1998-2006 թթ.

(մլն. դրամ)									
Ցուցանիշներ	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Դեֆիցիտի հավելաճը նախորդ տարվա նկատմամբ, այդ թվում՝	16944	5699	-5935	3149	-12843	6270	-4342	6337	20584
ա) ի հաշիվ եկամուտների փոփոխության	42846	30908	10405	-8698	25759	67821	-12857	71224	67010
բ) ի հաշիվ ծախսերի փոփոխության	59790	36607	4470	-5549	12916	74091	-17199	77561	87594

Աղյուսակի տվյալներից պարզ է դառնում, որ ղեկիցիտի հավելաճն ուղղակիորեն պայմանավորված է եկամուտների նկատմամբ ծախսերի գումարի կտրուկ փոփոխությամբ: Օրինակ՝ 2000, 2002 և 2004 թթ. ղեկիցիտի հետաճը նախորդ տարիների նկատմամբ ապահովվել է այդ տարիների ծախսերի հարաբերական կրճատումով, որն ևս փաստում է, որ բյուջեի ղեկիցիտի պատճառներից մեկը ծախսերի ոչ արդարացված չափերն են: Օրինակ՝ դա էլ հանդիսացել է 1998, 2003, 2005 և 2006 թվականների ղեկիցիտի աճի հիմնական պատճառը:

ՍԵՎԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՊԱՀ ասպիրանտ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսավարման նոր պայմաններում էլ ավելի է կարևորվում բանկային համակարգի դերը ՀՀ տնտեսության տնտեսական աճի ապահովման գործում: Ուստի այդ առումով, ինչպես առևտրային բանկերը, այնպես էլ մյուս տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեության կարգավորման համար պետք է ունենան դրամական միջոցների որոշակի գումար կամ այլ կերպ՝ ռեսուրսներ: Վերջիններս իրենցից ներկայացնում են սեփական և ներգրավված միջոցների այն ամբողջականությունը, որոնք գտնվում են նրանց տնօրինության ներքո ու օգտագործվում են ակտիվային գործառնությունների իրականացման համար:

Ուստի, առևտրային բանկերի գործունեության հիմնական սկզբունքը բանկի գործունեության իրականացումն է սեփական և ներգրավված միջոցների շրջանակներում: Սա, մասնավորապես նշանակում է, որ բանկերը պետք է ապահովեն բանակական համապատասխանություն իրենց ռեսուրսների և ներդրումների միջև:

Բանկերը վճարունակության և իրացվելիության խնդիրներից խուսափելու նպատակով պետք է ապահովեն ոչ միայն բանակական, այլ նաև ժամկետային համապատասխանություն իրենց ռեսուրսների և